ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔ

<<30>> սեպտեմբերի 2014 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

ՆԻՍՏԸ ՎԱՐՈՒՄ Է՝ **Գյումրի համայնքի ղեկավար Ս.Մ.Բալասանյանը**

ՆԻՍՏԸ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ Է՝ **Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռ.Ասատրյանը**

ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ՝ **Գյումրի համայնքի ավագանու անդամներ՝**

Ա. Ադամյան Գ. Ադամյան Ա. Բաղեյան Ա. Բաղրամյան Լ.Բարսեղյան Մ.Գաբոյան Ա.Գրիգորյան Վ.Եդիգարյան Գ.Թաթարյան Հ. Խաչատրյան Հ. Կարապետյան Տ.Հովհաննիսյան Վ. Հունանյան Ն. Մեսրոպյան Ռ.Մխիթարյան Է.Մկրտչյան Վ.Շիրինյան Մ. Սահակյան Տ. Փանոսյան

ՆԻՍՏԻՆ ՀՐԱՎԻՐՎԱԾ ԵՆ՝ Համայնքի ղեկավարի տեղակալներ՝ Ռ.Սանոյանը և Վ. Մխիթարյանը, համայնքի ղեկավարի խորհրդականներ՝ Հ.Սարգսյանը, Ա.Բալաբեկյանը, Վ.Սուքիասյանը, Ա.Մովսեսյանը, քաղաքապետարանի աշխատակազմի՝ ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լ.Ջիլավյանը, բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի պետ Կ.Մանասյանը, քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի ժ/պ Ա.Հակոբյանը, քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանը, ծրագրերի, ինքնակամ շինությունների և հողի վերահսկողության բաժնի պետ Ս.Ղազարյանը, կրթության բաժնի պետի ժ/պ Հ.Սուլթանյանը, ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետ Մ.Ղազարյանը, համայնքային գույքի հաշվառման և կառավարման բաժնի պետ Ա.Դավթյանը, վերահսկողության բաժնի պետ Ա.Համբարձումյանը, բյուջեի եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Ս.Մինասյանը, գովազդի բաժնի պետ Հ.Թադևոսյանը, իրավաբանական ապահովման բաժնի պետի ժ/պ Ա.Չախոյանը, քարտուղարության բաժնի պետ Ն.Բարսեղյանը

ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ ՆԱԵՎ՝

ԶԼՄ-ների ներկայացուցիչներ, ՀԿ-ներ (ցուցակը կցվում է)

ԼՍԵՑԻՆ.

1. ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ)

Համայնքի ղեկավար Ս.Բալասանյանը ներկայացրեց ավագանու նիստի օրակարգը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաստատել Գյումրի համայնքի ավագանու 2014 թվականի սեպտեմբերի 30-ի հերթական նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 19
դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 161-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լ. Ջիլավյանին:
Լ.Ջիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1.Գյումրի համայնքի ավագանու 2013թվականի դեկտեմբերի 27-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2014թվականի բյուջեի եկամուտների և ծախսերի հաշվեկշռվածությունը հաստատելու մասին>> N 161-Ն որոշմամբ հաստատված NN 1,2,3,6 հատվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն համապատասխանաբար NN 1,2,3,4 հավելվածների:
2. Գյումրի համայնքի 2014 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից 99331.0 (իննսունինը միլիոն երեք հարյուր եռեսունմեկ հազար) Հայաստանի Հանրապետության դրամը ուղղել բյուջեի ֆոնդային մաս:
3.Հանձնարարել քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին օրենքով սահմանված կարգով կատարել սույն որոշման 1-ին և 2-րդ կետերում նշված փոփոխությունները:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 19
դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 18-Ի N 46-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՎԵԼՎԱԾ N 1-ՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լ. Ջիլավյանին:

Լ.Ջիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2014 թվականի ապրիլի 18-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2012 թվականի նոյեմբերի 22-ի N 170-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 46-Ա որոշման 1-ին կետով հաստատված N 1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 19
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

4. ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԹՎՈՎ 114 (ՄԵԿ ՀԱՐՅՈՒՐ ՏԱՍՉՈՐՍ) ԱՆՁԱՆՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լենա Ջիլավյանին:

Լ.Ջիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- ավագանու անդամ Տ. Փանոսյան.«Ես ուսումնասիրել եմ և շատ լավ ծանոթ եմ Մարգարիտ Խաչատրյանի ընտանեկան սոցիալական պայմաններին: Հաշվի առնելով նրա սոցիալական ծանր պայմանները՝ առաջարկում եմ նախատեսված 40.000 դրամի չափով օգնությունը ավելացնել և դարձնել 80.000 ՀՀ դրամ»:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 19
դեմ – 0
ձեռնպահ – 0
Առաջարկությունն ընդունվեց

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Թվով 114 (մեկ հարյուր տասնչորս) անձանց կանխիկ տրամադրել 1 420 000 (մեկ միլիոն չորս հարյուր քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման առաջին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2014 թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4729) <<Այլ նպաստներ>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 19
դեմ – 0

ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ <<ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լենա Ջիլավյանին:

Լ.Ջիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Գյումրի համայնքի <<Կենտրոնական գրադարան>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը հատկացնել դրամական միջոցներ 180 000 (մեկ հարյուր ութսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով:
2. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին հատկացումը կատարել Գյումրի համայնքի բյուջեի վարչական մասի 8/2/1 գործառական դասակարգման (4819) <<Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին>> տնտեսագիտական հոդվածից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 19
դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լենա Ջիլավյանին:

Լ.Ջիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզային ճգնաժամային կառավարման կենտրոնին անհատույց օգտագործման իրավունքով 2 (երկու) տարի ժամկետով տրամադրել թվով 40 (քառասուն) հատ աթոռ՝ ընդամենը հաշվեկշռային արժեքը՝ 480.000 (չորս հարյուր ութսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, մաշվածքը՝ 96.000 (իննսունվեց հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, մնացորդային արժեքը՝ 384.000 (երեք հարյուր ութսունչորս հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ եռօրյա ժամկետում սահմանված կարգով կազմակերպել և իրականացնել սույն որոշման 1-ին կետում նշված գույքի հանձնման-ընդունման գործընթացը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 18
դեմ – 1 (Լևոն Բարսեղյան)
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵԶԴԻՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆԸ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՈՂ՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լենա Ջիլավյանին:
Լ.Ջիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Եզդիների ազգային միությանը Իրաքի հյուսիսային մասի Սինջարի տարածքի եզդիներին օգնելու նպատակով տրամադրել 1 000.000 (մեկ միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2014 թվականի բյուջեի 8/4/2 գործառական դասակարգման (4819) <<Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 19
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

8. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 190-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ռ.ԱՍԱՏՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռ. Ասատրյանին:
Ռ.Ասատրյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 12-ի «Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից

խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով ստեղծելու, հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու մասին» N 190-Ա որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 17
դեմ – 1 (Լևոն Բարսեղյան)
ձեռնպահ – 1 (Վահան Հունանյան)
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

9. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Ռ.ԱՍԱՏՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռ. Ասատրյանին:

Ռ.Ասատրյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը՝ համաձայն հավելվածի:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 19
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

10. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ԳՈՐԾՈՂ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ, ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՑՈՂ Ռ.ԱՍԱՏՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռ. Ասատրյանին:

Ռ.Ասատրյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին կից հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումները, ձևավորման ու գործունեության կարգը՝ համաձայն հավելվածի:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 19

դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

11. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԳՈՐԿՈՒ ՓՈՂՈՑԻ՝ ՇԻՐԱԿԱՑԻ ՓՈՂՈՑԻՑ ՄԻՆՉԵՎ ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ՀՐԱՊԱՐԱԿ ՀԱՏՎԱԾԸ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանին:

Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի վարչական տարածքում գտնվող Գորկու փողոց՝ Շիրակացի փողոցից մինչև Բագրատունյաց հրապարակ հատվածը անվանափոխել Շիրազի փողոց՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի <<Բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության>> բաժնին՝ կազմակերպելու վերը նշված փողոցի անվանատախտակի պատրաստման և տեղադրման հետ կապված աշխատանքները:
3. Հանձնարարել Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի <<Ֆինանսատնտեսագիտական>> բաժնին՝ կատարելու անվանատախտակի պատրաստման և տեղադրման համար անհրաժեշտ վճարումը՝ համաձայն ներկայացված ակտերի:
4. Սույն որոշումն օրենքով սահմանված կարգով ներկայացնել անվանափոխումների ռեգիստրը վարող պետական լիազոր մարմնին՝ անվանափոխման պետական գրանցում իրականացնելու համար:
5. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության Ոստիկանության Գյումրու համապատասխան բաժին, հրապարակել մամուլում և հեռուստատեսությամբ:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 19
դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

12. ԳՅՈՒՄՐՈՒ Ն 6 ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԻ ՇԵՆՔԸ <<ԱՌԴԱ>> ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԻՑ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՅՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանին:

Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Վաղաժամկետ դադարեցնել <<ԱՌԴԱ>> բարեգործական հիմնադրամի հետ 2005 թվականի սեպտեմբերի 14-ին կնքված գույքի անհատույց օգտագործման N 2138 պայմանագրի գործողությունը և լուծել այն:
2. Գյումրու համայնքային սեփականություն համարվող Կարեն Դեմիրճյան փողոցի N 23 հասցեի 452,00 (չորս հարյուր հիսուներկու) քառակուսի մետր մակերեսով N 6 նախակրթարանի շենքը և կառուցապատման ու սպասարկման համար զբաղեցրած 1043,2 (հազար քառասուներեք ամբողջ երկու տասներորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել Հայաստանի Հանրապետության Արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչությանը՝ նորաստեղծ մարզային ճգնաժամային կառավարման կենտրոնը տեղակայելու համար:
3. Օրենքով սահմանված կարգով կնքել շենքի և կառուցապատման ու սպասարկման համար զբաղեցրած հողամասի անհատույց (մշտական) օգտագործման պայմանագրեր:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 18
դեմ – 1 (Լևոն Բարսեղյան)
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

13. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ <<ԿՈՒՄԱՅՐԻ>> ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԳԵԼՈՑ- ԹԱՆԳԱՐԱՆ>> ՀՈԱԿ-Ի <<ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿ-ԹԱՆԳԱՐԱՆ>> ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՄԱՍ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՑՈՂ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանին:

Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Գյումրի համայնքի <<Կումայրի>> պատմամշակութային արգելոց թանգարան>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության <<Քանդակագործության ազգային պարկ-թանգարան>> մասնաճյուղին անհատույց օգտագործման իրավունքով, 5 (հինգ) տարի ժամկետով հատկացնել Գյումրի քաղաքի Ղարսի խճուղի N 8/2 հասցեում գտնվող 130056 (հարյուր երեսուն հազար հիսունվեց) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 18

դեմ – 0
ձեռնպահ – 1 (Լևոն Բարսեղյան)

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ

14. ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃՈՒՂԻ N 30ա ՀԱՍՑԵԻ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԻ ՇԵՆՔԻ ԵՐԿՈՒ ՄԱՍՆԱՇԵՆՔԵՐԸ <<ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆ>> ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԻՑ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԵՎ ԴՐԱՆՔ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՄԵՐԻԿՅԱՆ <<ՓԱՐՈՍ>> ՀԻՄՆԱԴՐԱՄԻ <<ԴԵՊԻ ԱՌԱՋ>> ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՑՈՂ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանին:

Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. <<Առաքելություն Հայաստան>> բարեգործական հասարակական կազմակերպության օգտագործումից հետ վերցնել Երևանյան խճուղու N 30ա հասցեի նախակրթարանի նպատակային չօգտագործվող, Գյումրու համայնքային սեփականություն հանդիսացող երկու մասնաշենքերը՝ անհատույց օգտագործման թողնելով փաստացի օգտագործվող մասնաշենքը, մինչև 2017 թվականի սեպտեմբերի 22-ը:
2. Օգտագործումից հետ վերցված երկու մասնաշենքերը 10 (տասը) տարի ժամկետով անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել ամերիկյան <<Փարոս>> հիմնադրամի նորաստեղծ <<Դեպի առաջ>> բարեգործական հասարակական կազմակերպությանը՝ բարեգործական ծրագրեր իրականացնելու նպատակով:
3. Սահմանել, որ նախակրթարանի շենքը և կառուցապատման ու սպասարկման համար զբաղեցրած հողամասը առանձնացվում է Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի կողմից տրված հատակագիծ-սխեմայով:
4. Սահմանված կարգով դադարեցնել <<Առաքելություն Հայաստան>> բարեգործական հասարակական կազմակերպության հետ կնքված պայմանագիրը, այն լուծել և կնքել նոր պայմանագրեր՝ առանձնացված մասերի համար:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 18
դեմ – 1 (Հրայր Խաչատրյան)
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

15. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 13-Ի N 11 ՈՐՈՇՈՒՄԸ ՉԵՂՅԱԼ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՑՈՂ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանին:

Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Չեղյալ ճանաչել Հայաստանի Հանրապետության Գյումրի համայնքի ավագանու 2006 թվականի նոյեմբերի 13-ի՝ «Գյումրի քաղաքում Ռուսաստանի Դաշնության գլխավոր հյուպատոսարանի շենք կառուցելու նպատակով 1,20 (մեկ ամբողջ երկու տասնորդական) հեկտար մակերեսով հողամաս ՀՀ Կառավարությանը նվիրելու մասին» N 11 որոշումը:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 19
դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

16. ՄՐՑՈՒՅԹՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՑՈՂ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանին:

Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաստատել մրցույթով կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող, առանձնացված հողամասերի վարձավճարների մեկնարկային չափերը ՝ համաձայն հավելվածի:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 19
դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

17. ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանին:

Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաստատել Գյումրի համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, առանձնացված հողամասերն աճուրդային կարգով օտարելու նպատակով սահմանված մեկնարկային գներն ու պայմանները՝ համաձայն հավելվածի:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 19
դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

18. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 30-Ի N 101-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանին:

Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2014 թվականի հուլիսի 30-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Սերգեյ Համբարձումյան փողոց N 35/1 հասցեի հողամասը, կաթսայատունը աճուրդային կարգով օտարելու և օտարման մեկնարկային գին հաստատելու մասին» N 101-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝
   1) որոշման 2-րդ կետում «150 000 (հարյուր հիսուն հազար)» թիվը և բառերը փոխարինել «80 000 (ութսուն հազար)» թվով և բառերով,
   2) որոշման 2-րդ կետում «700 000 (յոթ հարյուր հազար)» թիվը և բառերը փոխարինել «370 000 (երեք հարյուր յոթանասուն հազար)» թվով և բառերով,
   3) որոշման 2-րդ կետում «850 000 (ութ հարյուր հիսուն հազար)» թիվը և բառերը փոխարինել «450 000 (չորս հարյուր հիսուն հազար)» թվով և բառերով:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 19

դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

19. ՄՐՑՈՒՅԹՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանին:

Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաստատել հասարակական նպատակով, 2 (երկու) տարի ժամկետով Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Գործարանային փողոց N 11 հասցեի Մ 14-14 ծածկագրով 3,13 (երեք ամբողջ տասներեք հարյուրերորդական) հեկտար մակերեսով առանձնացված հողամասը մրցույթով կառուցապատման իրավունքով տրամադրելու վարձավճարի մեկնարկային չափ՝ 2191000 (երկու միլիոն հարյուր իննսունմեկ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ::

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 19
դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

20. <<ԳՅՈՒՄՐՈՒ ՄՈՐ ԵՎ ՄԱՆԿԱՆ ԱՎՍՏՐԻԱԿԱՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՄԱՍ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանին:

Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. «Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդանոց» փակ բաժնետիրական ընկերությանը բարեկարգման և կանաչապատման նպատակով անհատույց օգտագործման իրավունքով 25 (քսանհինգ) տարի ժամկետով հատկացնել Գյումրի քաղաքի Գարեգին Նժդեհի փողոցի N 5/12 հասցեում գտնվող 0,03358 (զրո ամբողջ երեք հազար երեք հարյուր հիսունութ հարյուրհազարերորդական) հեկտար մակերեսով համայնքապատկան հողամասը:
2.Հատկացված հողամասի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 19

դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

21. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 4-Ի N 15-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐՎԱԾ ՔԱՂԱՔ ԳՅՈՒՄՐԻ ՄԱԶՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ N 18/6 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՄԻ ՄԱՍԸ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանին:

Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Գյումրի համայնքի ավագանու 2011 թվականի փետրվարի 4-ի «Աճուրդով օտարելու նպատակով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը առանձնացնելու և աճուրդի մեկնարկային գներ հաստատելու մասին» N 15-Ա որոշման ցուցակի 13-րդ կետի 3-րդ սյունակի «220,0» թիվը փոխարինել «49,90 (քառասունինն ամբողջ ինը տասնորդական)» թվով և բառերով:
2. Սահմանել, որ որոշմանը հաջորդած մյուս իրավական ակտերը փոփոխվում են Գյումրի համայնքի ղեկավարի որոշումներով:
3. Մազմանյան փողոց N 18/10 հասցեի 170,10 (հարյուր յոթանասուն ամբողջ մեկ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը հետ վերցնել համայնքի հաշվեկշիռ և սեփականատիրոջը տալ փոխհատուցում:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 19
դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

22. ԳՅՈՒՄՐՈՒ ՕՐ ԱՄԵՆԱՄՅԱ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ Ա.ՄԿՐՏՉՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի մշակույթի և երիտասարդության հարցերի բաժնի պետի ժ/պ Ա.Մկրտչյանին:

Ա.Մկրտչյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. 2014 թվականի հոկտեմբերին Գյումրու օր տոնակատարությունը կազմակերպելու և անցկացնելու համար հատկացնել 17.070.000 (տասնյոթ միլիոն յոթանասուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:
2. Թույլատրել սույն որոշման 1-ին կետում նշված գումարի շրջանակներում ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումն իրականացնել բանակցային ընթացակարգով՝ առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու:

3. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ ծախսերը կատարել Գյումրի համայնքի 2014 թվականի բյուջեի 8/6/1 գործառական դասակարգման (4861) «Այլ ծախսեր» տնտեսագիտական դասակարգման հոդվածից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 19
դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

23. ԼԵՎՈՆ ԱՐՍԵՆԻ ՋՈՒԼՖԱԼԱԿՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐՈՒ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՈՂ Ա.ՄԿՐՏՉՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի մշակույթի և երիտասարդության հարցերի բաժնի պետի ժ/պ Ա.Մկրտչյանին:
Ա.Մկրտչյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Լևոն Արսենի Ջուլֆալակյանին շնորհել Գյումրու պատվավոր քաղաքացի կոչումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 19
դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

24. ԿԱՌԼԵՆ ԳՐԻԳՈՐԻ ԱԴԱՄՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐՈՒ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՈՂ Ա.ՄԿՐՏՉՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի մշակույթի և երիտասարդության հարցերի բաժնի պետի ժ/պ Ա.Մկրտչյանին:
Ա.Մկրտչյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Կառլեն Գրիգորի Ադամյանին շնորհել Գյումրու պատվավոր քաղաքացի կոչումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 19
դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

25. ԱԼԻԿ ՅԱՇԱՅԻ ԳՅՈՒՆԱՇՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐՈՒ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՈՂ Ա.ՄԿՐՏՉՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի մշակույթի և երիտասարդության հարցերի բաժնի պետի ժ/պ Ա.Մկրտչյանին:

Ա.Մկրտչյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ալիկ Յաշայի Գյունաշյանին շնորհել Գյումրու պատվավոր քաղաքացի կոչումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 19
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

26. 2014 ԹՎԱԿԱՆԻՆ ՉԻՆԱՍՏԱՆՈՒՄ ԿԱՅԱՑԱԾ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐՈՒՄ ԲԱՐՁՐ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՍԱԾ ԵՎ ՄԵԴԱԼՆԵՐ ՆՎԱՃԱԾ ԳՅՈՒՄՐԵՑԻ ՄԱՐԶԻԿՆԵՐԻՆ, ՆՐԱՆՑ ՄԱՐԶԻՉՆԵՐԻՆ ՍՊՈՐՏԱՅԻՆ ՊԱՐԳԵՎՆԵՐ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ Մ.ՂԱԶԱՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետ Մ.Ղազարյանին:

Մ.Ղազարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- ավագանու անդամ Ա. Բադեյանը.«Առաջարկում եմ մեկ միլիոն նախատեսված գումարը ավելացնել 600.000 ՀՀ դրամով»:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 19
դեմ – 0
ձեռնպահ – 0

Առաջարկությունն ընդունվեց

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. 2014 թվականին Չինաստանում պատանիների օլիմպիական խաղերում բարձր արդյուքների հասած և մեդալներ նվաճած գյումրեցի մարզիկներին, նրանց մարզիչներին շնորհել սպորտային պարգևներ 1.600.000 (մեկ միլիոն վեց հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ դրամական հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2014թվականի բյուջեի 8/1/1 գործառական դասակարգման (4727) <<Կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 19
դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

27. 2014 ԹՎԱԿԱՆԻ ԸՄԲՇԱՄԱՐՏԻ ԱՇԽԱՐՀԻ ՉԵՄՊԻՈՆ ԳՅՈՒՄՐԵՑԻ ԱՐԹՈՒՐ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻՆ ԱՎՏՈՄԵՔԵՆԱ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ԵՎ ՆՎԻՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՈՂ Մ.ՂԱԶԱՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետ Մ.Ղազարյանին:

Մ.Ղազարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Արթուր Ալեքսանյանին <<Հյունդաի Էլանտրա>> մակնիշի ավտոմեքենա ձեռք բերելու և նվիրելու համար հատկացնել դրամական միջոցներ՝ 9 880 000 (ինը միլիոն ութ հարյուր ութսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով:
2. Թուլատրել նշված տրանսպորտային միջոցի անհետաձգելի համարվող գնումը իրականացնելու բանակցային ընթացակարգի կիրառմամբ՝ առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու:
3. Հանձնարարել.

ա. ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման առաջին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2014թվականի բյուջեի 8/1/1 գործառական դասակարգման (5121) <<Տրանսպորտային սարքավորումներ>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից,

բ. ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետին՝ սահմանված կարգով կազմակերպել և իրականացնել ավտոմեքենայի հանձնման-ընդունման գործընթացը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 19
դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

28. 2014 ԹՎԱԿԱՆԻ ԸՄԲՇԱՄԱՐՏԻ ԱՇԽԱՐՀԻ ՉԵՄՊԻՈՆ ԳՅՈՒՄՐԵՑԻ ԱՐՍԵՆ ՋՈՒԼՖԱԼԱԿՅԱՆԻՆ ՀՈՂԱՄԱՍ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՈՂ Մ.ՂԱԶԱՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետ Մ.Ղազարյանին:

Մ.Ղազարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Արսեն Ջուլֆալակյանին հողամաս ձեռք բերելու համար հատկացնել դրամական միջոցներ 2 400 000 (երկու միլիոն չորս հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով:
2. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման առաջին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2014 թվականի բյուջեի 8/1/1 գործառական դասակարգման (4727) <<Կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 19
դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

29. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ՇԻՆՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ Մ.ՂԱԶԱՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետ Մ.Ղազարյանին:

Մ.Ղազարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Գյումրու համայնքային ենթակայության թվով 14 (տասնչորս) մարզադպրոցներին շինվերանորոգման աշխատանքներ կազմակերպելու և իրականացնելու նպատակով հատկացնել դրամական միջոցներ 6.000.000 (վեց միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամի չափով՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2014թվականի բյուջեի 8/1/1 գործառական դասակարգման (4819) <<Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 19
դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

30. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ ՈՒՂՂՎԱԾ ՈՒՂԵՐՁԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ Լ.ԲԱՐՍԵՂՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և զեկուցման իրավունքը տվեց Գյումրի համայնքի ավագանու անդամ Լևոն Բարսեղյանին:

Լ.Բարսեղյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Ընդունել Հայաստանի Հանրապետության վարչապետին և կառավարությանը ուղղված ուղերձ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 19

դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

31. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵԿ ԴԱՐ ԱՊՐԱԾ ԹՎՈՎ ԵՐԿՈՒ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՈՂ՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լենա Ջիլավյանին:

Լ.Ջիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1.Գյումրի համայնքի բնակիչներ՝

ա.Վարազդատ Արշակի Մանուկյանին (ծնված՝ 1911թվականի հունվարի 01-ին, հաշվառված՝ քաղաք Գյումրի, Ջափարիձեի փողոց տուն 51 հասցեում),
բ. Կորյուն Կարապետի Վարձեյանին (ծնված՝ 1914թվականի հունվարի 01-ին, հաշվառված՝ քաղաք Գյումրի, Կարեն Դեմիրճյանի փողոց, տուն 58 հասցեում) կանխիկ տրամադրել յուրաքանչյուրին 50 000 (հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման առաջին կետում նշված գումարների հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2014 թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4729) <<Այլ նպաստներ>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 19
դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

32. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՆԱԽԿԻՆ ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱԼԱՏԻ ՎԹԱՐԱՅԻՆ ՇԵՆՔԻ ՏԱՐԱԾՔԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ (ՄՇՏԱԿԱՆ) ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՈՂ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանին:

Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Գյումրի քաղաքի Ղանդիլյան փողոց 46/6 հասցեում գտնվող Երկաթուղայինների մշակույթի պալատի վթարային շենքը վերականգնելու և այն մշակութային նպատակներով օգտագործելու համար Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաքի Ռուս-հայկական մշակութային համագործակցության հասարակական ակադեմիայի «Արաքս» կազմակերպությանը անհատույց (մշտական) օգտագործման տրամադրել Մշակույթի պալատի կառուցապատման և սպասարկման համար անհրաժեշտ հողատարածքը, այդ թվում նաև հարակից պուրակը՝ բարեկարգման նպատակով:

2. Մշակույթի պալատի վթարային շենքի քանդման, վերականգնման աշխատանքները իրականացվելու են՝ համաձայն Գյումրու քաղաքապետի կողմից տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքի և համաձայնեցված նախագծի:
3. Տրամադրվող հողատարածքի սահմանները որոշվում են Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության ու ճարտարապետության բաժնի կողմից տրված հատակագիծ-սխեմայով:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 18
դեմ – 1 (Լևոն Բարսեղյան)
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց